## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

# ՀԻՆԱՒՈՒՐՑ ՏԵՍԻԼ

Այս անտառապատ լեռան գագաթին
Կանգնած է անձայն հինաւուրց մի վանք,
Կարծես բեկոր է մի հին հէքեաթի,
Հանգած պապերիս հառաչն է նա թանկ։

Գառ են զոհ արել խաղաղ օրերին
Այգու կանաչում վեհաշուք վանքի,
Ոսկէ խունկ ծխել բուրող, բերկրալի,
Խնկահոտ խառնել ծաղկանց բուրմունքին։

Քարերից նրանք քաշել են պարիսպ,
Պարսպել վանքը պատերով մի ժայռ,
Վանքն է խոյացել քան բերդ վիթխարի,
Դարձել հալածուած մարդոց փրկավայր։

Ինչպէս այրուձի հովիտում ռազմի,
Մինչեւ հիմա էլ պարիսպներն ամուր,
Կարծես ուզում են յորձանքով հողմի
Ձորերը սուրալ, ճզմել թշնամուն։

Թւում է ձորի քարերը խառնակ
Դիակոյտերն են մեր ախոյեանի,
Ցաւիտեան թափուած վանքի ոտքի տակ,
Ծեծուած հողմերով մեր հին ցասումի։

Որպէս պապերիս հոգին անարատ
Աղաւնիներն են հիմա բուն հիւսում
Այս անառ վանքում, ուր կեցած հպարտ
Մշտնջենութեան ղօղանջն է լսում։

«ԻՄ ԳԱՐՈՒՆԸ» ԱՇՈՏ ԳՐԱՇԻ